

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/2

19 հունվարի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանի 23.12.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 16.11.2015 թ-ի թիվ 6115966 ակտի 3-րդ կետի դեմ:

Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Էրեբունուի ՀՏ-ի կողմից Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանի մոտ 21 հոկտեմբերի 2015 թ-ից 05 նոյեմբերի 2015թ-ը ժամանակահատվածում իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության, հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառման ճշտության, օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Համաձայն 16 նոյեմբերի 2015թ-ի ստուգման թիվ 6115966 ակտի 3-րդ կետի, խախտվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի թիվ 8 հավելվածով սահմանված կարգի 5-րդ կետը, համաձայն որի Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանի կողմից վերը նշված ժամանակահատվածում ք.Երևան, Հին Էրիվանցու 2շ., 5-րդ տարածք հասցեում իրականացվել է հանրային սննդի գործունեություն՝ 60 մ/ք սպասարկման սրահ ունեցող տարածքի միջոցով, սակայն նույն օրենքով նախատեսված արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն հարկային մարմնին չի ներկայացվել, որի համար «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանը տուգանվել է 806400 (134400 X 3 ամիս X 2) դրամ գումարի չափով:

Միաժամանակ հարկ է նշել, որ համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի մինչև 01 հոկտեմբերի 2015թ. ամբողջությամբ կատարվել է հոկտեմբեր ամսվա արտոնագրային վճարի վճարման պարտավորությունը և սույն թվականի սեպտեմբերի 30-ին նույնպես փոստային ծանուցման միջոցով հոկտեմբեր ամսվա արտոնագրային վճար վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը ուղարկվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ: Այնուհետև, 05 հոկտեմբերի 2015թ.-ին Կենտրոնի ՀՏ-ից ստացվել է համապատասխան ծանուցում, ըստ որի հետ է վերադարձվում Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանի հոկտեմբեր ամսվա արտոնագրային վճար վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, մատնանշելով, որ վերջինս չի հանդիսանում Կենտրոն ՀՏ-ի հարկատու: Նույն օրը վերը նշված հայտարարությունը և Կենտրոն ՀՏ-ից ստացված կից գրությունը ներկայացվել է Էրեբունու ՀՏ, որն էլ տեսչությունը հրաժարվել է ընդունել և Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանին չի համարել արտոնագրային վճար վճարող՝ 1-ը հոկտեմբերի 2015-ից մինչև 31 հոկտեմբերի 2015թ. ընկած ժամանակահատվածում:

Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանը նշում է, որ նշված ժամանակահատվածում իր կողմից բոլոր հարկային վճարումները եղել են պատշաճ կերպով կատարված և արտոնագրային վճար վճարող համարվելու մասով որևէ չկատարված հարկային պարտավորություն չունի: Տվյալ դեպքում հարկ է նշել, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի վարչարարություն իրականացնելիս վարչական մարմնին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտավորություններով կամ մերժել նրանց որևէ

իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային իմաստով կատարվել են:

Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանը ցանկանում է նշել նաև, որ տուգանքի կիրառման պարագայում կհայտնվի ֆինանսական ծանր վիճակում, որը կհանգեցնի իր գործունեության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանը խնդրում է Էրեբունու ՀՏ 16.11.2015 թ-ի թիվ 6115966 ակտի 3-րդ կետով սահմանված տուգանքի կիրառումը չեղարկել:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Էրեբունի ՀՏ պետի 21.10.2015 թ-ի թիվ 6115966 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանի մոտ իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության, հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառման ճշտության և օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգումներ: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Էրեբունի ՀՏ 16.11.2015 թ-ի թիվ 6115966 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 1.136.400 դրամ:

Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանի գանգատը վերաբերվում է միայն արտոնագրային վճարի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությանը:

Այսպես, Ակտի 3-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանը խախտելով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի թիվ 8 հավելվածով սահմանված կարգի 5-րդ կետի պահանջները 01.10.2015թ.-ից մինչև 31.10.2015թ.-ը ք.Երևան, Հին Երևանցու 2 շ., 5 տարածք հասցեում իրականացրել է հանրային սննդի գործունեություն 60 մ/ք սպասարկման սրահ ունեցող տարածքի միջոցով, սակայն նույն օրենքով նախատեսված արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն հարկային մարմին չի ներկայացրել: Առանց արտոնագրի հանրային սննդի գործունեություն է իրականացրել, որի մասին վկայում է տվյալ հասցեում տեղադրված ՀԴՄ-ից դուրս բերված Z հաշվետվությունը՝ համաձայն որի 01.10.2015թ.-ից մինչև 31.10.2015թ. հասույթը կազմել է 2.733.900 դրամ:

Արդյունքում հիմք ընդունելով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի դրույթներն արտոնագրային վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 806.400 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի թիվ 8 հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ արտոնագրային վճար վճարողները մինչև գործունեություն իրականացնելը, իսկ գործունեության տվյալ տեսակի համար համապատասխան արտոնագիր ունեցող անձինք՝ մինչև նախկին արտոնագրով նախատեսված ժամանակահատվածից հետո գործունեության տվյալ տեսակը շարունակելը որևէ ժամանակահատվածի (օրացուցային տարվա ընթացքում ընտրված ցանկացած ամիս կամ հաջորդական ամիսների հանրագումար, բայց ոչ ավելի, քան մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը) համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սույն հավելվածի N 1 ձևով սահմանված հայտարարություն:

Նույն հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ հայտարարությունը ներկայացնելու օրվա ընթացքում սույն հավելվածի N 2 ձևով արտոնագիր չտրամադրելու դեպքում արտոնագիրը համարվում է տրամադրված հայտարարությունը ներկայացնելու օրը, եթե

անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը, սույն հավելվածի 16-րդ կետին համապատասխան, կատարել է արտոնագրային վճարի վճարում:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանը նախապես՝ մինչև գործունեություն իրականացնելը, 30.09.2015 թ-ին փոստային առաքմամբ ուղարկել է 2015 թ-ի հոկտեմբեր ամսվա «Արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն»-ը, ինչպես նաև 28.09.2015 թ-ին (նախապես) կատարել է արտոնագրային վճարի վճարումը: Պարզապես, «Արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն»-ը էրեբունու ՀՏ ուղարկվելու փոխարեն ուղարկվել է Կենտրոնի ՀՏ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն. «Եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա վարչական մարմինը դրանք մատնացույց է անում դիմողին՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները, կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին»:

Նույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Եթե դիմումը ներկայացվել է ոչ իրավասու վարչական մարմին, ապա դիմումն ստացած վարչական մարմինը եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին»:

Վերոգրյալ իրավանորմերի դրույթներից հետևում է, որ տվյալ դեպքում Կենտրոնի ՀՏ-ն իրավասու էր Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանի կողմից ներկայացված «Արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն»-ը վերահասցեագրել էրեբունու ՀՏ՝ այդ մասին ծանուցելով դիմողին: Նման կերպ վարվելու պարագայում Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանի «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի թիվ 8 հավելվածի 5-րդ կետով սահմանված «Արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն» ներկայացնելու պարտականությունը կհամարվեր կատարված, ինչի հետևանքով հարկ վճարողը կխուսափեր անբարենպաստ հետևանքներից:

Այսպիսով, վերոգրյալ փաստական հանգամանքներից հետևում է, որ Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանը «Արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն»-ը Կենտրոնի ՀՏ է ներկայացրել թյուրիմացաբար, իսկ Կենտրոնի ՀՏ կողմից ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում համապատասխան գործողություններ չկատարելու հետևանքով կազմվել է Ակտ: Արդյունքում արտոնագրային վճարի գծով Ա/Ձ Բիզանթ Քեթենճյանի նկատմամբ հաշվարկվել են լրացուցիչ պարտավորություններ, ինչն էլ, ըստ էության, իրավաչափ չէ և չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 16.11.2015 թ-ի թիվ 6115966 ակտի 3-րդ կետը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ